

ԴԱՅԱԳԵՏ ԼՈՒԻ ՄԱՐԻԵ

LOUIS MARIÈS

ԿԵԱՆՔԸ, ՀԱՑԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԸ

ԵՒՆՐԱ

«ՀԱՑԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԿՐԿՆԱԿԻ ԲՆՈՅԹԻ ՄԱՍԻՆ»

ԱՆՏԻՊ ՅՈՒԽԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ*

ՄԱՐԻԵՍԻ ՀՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ա. Ա Կ Ե Տ Ա Ր Ա Ն

2. Le Diatessaron à l'origine de la version arménienne (RSR, t. 38, 1952, p. 247-256).

Համբարքառ Աւետարանը որպէս հայերէն Աւետարանի նիմի

Հայերէն Աւետարանի թարգմանութեան սկզբնաղբիւրի վերաբերեալ Մաքլէրի վերոյիշեալ աշխատութեան եղբակացութիւնը չբաւարարեց բոլոր բանասէրներին. ոմանք հաւատ չընծայեցին նրան և շարունակեցին հետազօտել առաջադրուած խնդիրը, որովհետեւ հայերէն Աւետարանում նկատուող բազմաթիւ ասորաբանութիւններ և ասորերէն թարգմանութեան հետ իմաստային համապատասխանութիւններ իրենց առկայութեան գիտական բացարաւութիւնը գեռես չէին ստացել: Բանասէր Մերքը Մաքլէրի եղբակացութիւնը անհամոզիչ էր համարում հենց այդ ասորաբանութիւնների պատճառով (August Merk, Die armenischen Evangelien und ihre Vorlagen) [«Հայերէն Աւետարանները եւ Երանց սկզբնագիրը», BIBLICA, 1926, էջ 40-72]: «The Harvard Theological Review» հանդէսի չորրորդ համարում (էջ 203-404) 1928ին լոյս տեսած մի հետազօտութեան մէջ կարդուած ենք. «Մաքլէրի փաստերը, որով հայերէնին յունաբենէն կախում ունենալը կ'ուզէր ցուցնել, իրենց ոյժը կը կորսնցնեն, և մենք արդարացի կերպով կրնանք ընդունիլ ուրիշ աւելի հաւանական տեսութիւն մը, թէ հայկական թարգմանութիւնն ասորականին վրայ հիմնուած է» (Հանդէս Ամսորեալ, 1931, էջ 162):

Մաքլէրի տեսութեան համակարծիք չի եղել նաև հայագէտ Աթանիսիուս Լիոնէն՝ Մարիէսի աշակերտը: Մինչ այդ, յօդուածներում նա արտայայտուել էր ի միջի այլոց: 1950ին Հռոմում լոյս է ընծայում “Les origines de la version arménienne et le Diatessaron” («Աւետարանի հայերէն բարգմանուրեան ակունքները եւ Համբարքառ աւետարանը») աշխատութիւնը՝ նույիրուած հայերէն Աւետարանի սկզբնաղբիւրի օրոշման: Իհարկէ նաև ծանօթ է Մաքլէրի գրքին և տեսակէտին, որ մերժում է

* Հարունակութիւն՝ Սիսն, 1974, թ. 1-2, էջ 79:

ներածութեան մէջ։ Նու ևս հաւաքել է փառտեր, մանաւանդ նկատի է առել հինգերորդ դարի հայերէն մատենագրութեան մէջ աւետարանական այն մէջբերումները, որոնք տարբերում են Զօհրապեանի հրատարակութեան բնագրից և նոյնանում կամ մերձենում են Տատիանոսի «Համարաբառառ աւետարան»ին, «րքանով վերջինս յայտնի է բանասիրութեան՝ Եփրեմ Ասորու «Մեկնութեան» չորհիւ («Մեկնութիւն Աւետարանի համարբառ», զոր արարեալ և տեան Եփրեմի Խորին Ասորույ», ԱՐԲՈՅՆ Եփրեմի ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՅՑ, հատ. Բ, վենետիկ, 1836)։ Լիոնէն վկայակոչել է նաև Աւետարանների վրացերէն թարգմանութիւնը, որ ժամանակին կատարուել է հայերէնից, և յանգել այն եղբակացաւթեան, թէ յունարէն բնագրից կատարուած երկրորդ և վերջնական թարգմանութիւնից առաջ Հայաստանում օգտագործուել է Տատիանոսի «Համարաբառառ աւետարան»ի հայերէն «փութանակի» մի թարգմանութիւն, որի ազգեցութեան տակ մնացել է առանձին չորս Աւետարանների թարգմանութիւնը, որ փաստօրէն առաջինն էր օրանց համար։ Այսպիսով միայն կարելի է բացատրել վերջնական թարգմանութեան մէջ նկատուող ասորաբանութիւնները և իմաստի տեսակէտից ասորերէն թարգմանութեան հետ համաձայնող տողերը կամ բառերը, որոնք անբացատրելի էին մնում միայն յունարէն սկզբնագրի տեսակէտը ընդունողների համար, ինչպիսին էր Մաքլէրը։ Այդպիսով Լիոնէն մերժեց վերջինիս կարծիքը։ Նրա և ուրիշների պաշտպանած տեսակէտն այժմ սկսում է միակ ընդունելին դառնալ հայագիտութեան մէջ։

Ինչպէս Մաքլէրի աշխատութիւնը 1920 ին, Մարիէսը գրախօսել է նաև Լիոնէի գիրքը, մատենախօսականը վերնագրելով «Համարաբառառ Աւետարանը որպէս հայերէն Աւետարանի հիմք» կամ «Աւետարանի հայերէն թարգմանութեան հիմք», որ ինքնին շատ բան է ասում։ Նա անվերտահօրէն և առանց դիտողութեան կողմնակից է նոր տեսակէտին, Բայց 1946 ին, հատորիս վերջում բնագրով և հայերէն թարգմանութեամբ առաջին անգամ հրատարակուող անտիպ յօդուածում նա գրել է. «Յունարէն բնագրերն են ընկած Աւետարանների երկրորդ՝ վերջնական թարգմանութեան հիմքում, որ ունենք հայերէն Աստուածաշնչի մէջ։ Լիոնէ և Էստապալեան վարդապետների տեսակէտից, որ նոյնպէս Բառումշտարկինն է, թէ նախ կատարուել է հայերէն մի առաջին թարգմանութիւն ասորերէնից, ոչնչով չի փոխում Ֆրեգերիք Մաքլէրի գրայթը, որով թարգմանութիւնն ամբողջովին վերանայուել է յունարէն օրինակների հիման վրայ։ Առաջն տեսանք, որ Մաքլէրի գրայթի համաձայն սկզբից ևեթ եղել է սոսկ յունարէնից կատարուած հայերէն թարգմանութիւն։

Մարիէսի հետեւալ յօդուածը մի գրախօսութիւն է հենց Տատիանոսի «Համարաբառառ աւետարան»ի հին թարգմանութեան հրատարակութեան մասին, ուր ներածութեան մէջ ասուած է, թէ Համարաբառը իր գրումն է դրել Աւետարանների ասորական, հայկական և վրացական հին թարգմանութիւնների վրայ։

⁸ Բանասիրական առատ գրականութիւն կայ Տատիանոսի «Համարաբառառ աւետարան»ի և Նրա հայերէն հին թարգմանութեան մասին. տե՛ս Յ. Անասեան, Հայ համարաբառային գրականութիւնը և հայ մատենագրութեան համարբառ (Եջմիածին, 1971 և 1972)։

3. Pour l'étude du Diatessaron (RSR, t. 44, 1956, 228-233).

Հոմարօքբան Աւետիքանի ուսումնախութեան համար

Տատիանոսի «Համարաբառառ աւետարան»ի բնագիրն ուղղակի յայտնի չէ բանասիրութեան. Նրա մասին գաղափար ենք կազմում մամանկին կատարուած մէջբերութեանից և Եփրեմ Ասորու «Մեկնութեան» պահպանուած հայերէն հին թարգմանութիւնից. ասորին բնագիրը գեռ յայտնաբերուած չէ:

Հայոցէտ Հայր Լուի Լըլուարը 1953ին հրատարակեց Եփրեմ Ասորու «Մեկնութեան» հայերէն թարգմանութեան բաղդատական բնագիրը. 1954ին՝ իր կատարուած լոտինսիրէն թարգմանութիւնը “Commentaire de l’Évangile concordant” («Մեկնութիւն Համարաբառառ աւետարան»ի) բնահանուր խորագրով: Այս արժէքաւոր երկու գրքերը օգտակար են Աւետարանի ուսումնասիրութեան և հայ հին մատենագրութեան համար, ինչպէս հայերէն որևէ բնագրի գիտական հրատարակութիւն:

1956ին լոյս տեսած գրտիօսութեան մէջ Մարիէսը գնահատեց կատարուած աշխատանքը: Նա, ինչպէս Լըլուարը, բնգծեց «Մեկնութեան» հայերէն թարգմանութեան բացառիկ կարեարութիւնը այնքանով, որ ասորին բնագիրը յայտնաբերուած չէ. երկու ձեռագրերում պահպանուած հայերէն հին թարգմանութիւնը, որ բատ երեսյթին հինգերորդ գարից է, բնագրի ոյժ է ստունում:

Նախ՝ հայերէն թարգմանութեան բնագրի հրատարակութեան մասին:

Հետեւը հրատարակչի ներածութեան Մարիէսը մատենագիտական տեղեկութիւններ է տուել թարգմանութեան ձեռագրերի և առաջին հրատարակութեան մասին: Վենեսաբիկուն Միլիթարեանները 1835ին, իրենց թիւ 312 ձեռագրից հրատարակել են հայերէն թարգմանութիւնը: Յաջորդ տարին Մարիտոսից օտացել են «Մեկնութեան» մի ուրիշ ձեռագրի, որից Հ. Յովհ. Աւգերեանը կատարել է բատիններէն առաջին թարգմանութիւնը, առանց գիտական հիմունքների օգտուելով նույնագագիր բնագրից: Բնակոն է, որ այդպիսի թարգմանութիւնից չէին կարող վստահորէն օգտուել Աւետարանի բնագիրն ուսումնասիրող եւրոպացի բանասէրները: Աւելի լու գիճակում չէին նույն հայագէտները, քանի որ չկար «Մեկնութեան» հայերէն թարգմանութեան երկու ձեռագրերի հիման վրայ կատարուած գիտական հրատարակութիւնը: Այս այս կրկնուկի թերին լրացրել է Լըլուարը բնագրի բաղդատական և յատիններէն նոր թարգմանութեան հրատարակութեամբ, որոնք, բատ Մարիէսի, լու աշխատանքի արդիւնք են, անկախ մի քանի թերութիւններից: ահա դրանք:

Մարիէսը, խսանական բանասէր, ցանկացել է, որ գրչագրական և հնագրագիտական մանրամասն տեղեկութիւններ տրօւէին հայերէն երկու ձեռագրերի մասին, և հազորգուէր նրանց բավանդակութիւնը: Յշատակարանների ֆրանսերէն թարգմանութեան կից պէտք է հրատարակուէին նույն բնագրերը, որով կարելի էր անմիջապէս հոմոգուել, որ երկու ձեռագրերը ընդօրինակուած են միենայն մայր ձեռագրից:

Յանկալի էր նույն, որ հայերէն բնագրի հրատարակութեան մէջ նշուէին ձեռագրերի էջերը (ինչպէս Մարիէսի հրատարակած հայերէն բնագրերում):

Հայերէն բնոգրի հրատարակութեան համար Լըլուարը հիմք է ընդունել մէկ ձեռոգիր, երկրորդի ընթերցուածները դնելով տպատճեմ, յաճախ նշելով լուսագոյն տարրերակը: Աւստի հրատարակութիւնը մտածմք է քննական: ընթերցողը կամ ուսումնասիրազը ստիպուած է ընդհատել ընթերցումը և ծանօթանու այլընթերցուածներին:

«Մեկնութեան» լուսիներէն թարգմանութեան մէջ, բատ Մարիէսի, հաւատարմութեամբ արտացայտուած է հայերէն բնոգիրը: Թարգմանիչը ճիշտ է վարուել լուսինեկան գոտական ոճը յաճախ զանելով բնոգրի, մանաւանգ Աւետարանի մէջրերումների ճիշտ թարգմանութեան, ինչ որ չէր արել Յովհ: Աւգերեանը: Պէտք է ընդունել, որ Լըլուարը մեծապէս օգտուել է լուսիներէն առաջին թարգմանութիւնից:

Մարիէսն այն ժամանակ արգէն փարձուած հայոգէտ և թարգմանիչ էր, անձամբ պատրաստել էր հայերէն բնոգրերի հրատարակութիւններ և ֆրանսերէն ու լուսիներէն թարգմանութիւններ: Ուստի նրա գրական գնուհատականից յասոյ կարելի է վատահարուր օգտուել Լըլուարի արքէքաւոր հրատարակութիւնից և լուսիներէն թարգմանութիւնից:

Հայերէն Աւետարանի հետ է կոպուած նաև Մարիէսի հատեսույթուածը:

4. *Un commentaire sur l'Évangile de saint Jean, rédigé en arabe (circa 840) par Nonnos (Nana) de Nisibe, conservé dans une traduction arménienne (circa 856) (REA, t. 1, 1921, 273 - 296).*

Նոնոսի Ասուցոց փորդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին. չարգրուած է արարերէն (չ. 840թ.), պահպանուած է հայերէն թարգմանութեամբ (չ. 856թ.)⁹:

«Մեկնութեան» և նրա հեղինակի շուրջ առաջոցել են պատմական, բանուսիրական և այլ խնդիրներ, որ մի յօդուածում կարելի չէր լուծել. ուստի Մարիէսը բաւարարուել է դրանց մասին լոկ գաղափար տալով. անդրադարձել է «Մեկնութեան» չ. Բ. Զրոքեանի հրատարակութեան, ներածութեան և այլն:

«Մեկնութեան» հեղինակի անունը յայտնի է «Նանսո, Նոնոս, Նոնա» ասորական, «Նոննոս» յաւնական և «Յովհաննէս» հայեկան ձեւերով: Նա անտարակոյա Նանս Նիսիբեցին է, ինչպէս ենթագրել են Ք. Զրոքեանը և Մառը: Մարիէսը համառատ պատմել է նրա կենսագրութիւնը և «Մեկնութեան» հայերէն թարգմանութեան հանգամանքները:

«Հայոց իշխանաց իշխան» Բագարատ Բագրատունու խնդրանքով, հեղինակը «Մեկնութիւնը» շարադրել է արարերէն լիդուով, շուրջ 840ին: Անյայտ մի հայ թարգմանիչ այն սկսել է հայերէն թարգմանել Բագարատի եղբայր Սմբատ Բագրատունու պատուէրով: Սմբայն Նանսի գերութեան հետեանքով այն ընդհատուել է, շարունակուել Մարիէս Բագրատունու խնդրանքով և աւորատուել շուրջ 856ին: Մարիէսը մերժել է անդիմոցի հայոցէտ կանիբերի կարծիքը, թէ «Մեկնութիւնը» երկու անգում է հայերէն թարգմանուել: Հետագայում հեղինակը ազատուել է գերութիւնից և մասնակցել Եփրակաւանի հկեղեցական ժաղավին:

«Մեկնութիւնը» շարադրելուց առաջ հեղինակը Հայաստանում հաւատար գուանարանական բանագէճ է ունեցել Եպիկուռայ աստուա-

⁹ «Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց մատենաշարում», Ե, Վենետիկ, 1921, էջ 10-447, հրատ. Ք. Զրոքեան:

ծարսոն հպիսկոպոսի հետ: Մարիէսը փորձել է բանովէճի տօրեթիւը ուրոշել պատմական փաստերից և լուսելով: հպիսկոպոսի ինքնութեան հարցում հակադրուել է Ք. Չրաքեանին և Մատին, որոնք նրան նոյնագրել են կարայի քաղկեդսնական հպիսկոպոս թէոդորոս Արա կարայի հետ: Մարիէսը յետոյ համոզուել է, որ ինքը սխալուել է այս հարցում, և յայտաբարել է յատուկ դիտողութեան մէջ¹⁰:

Ք. Չրաքեանի հետ Մարիէսը համոզարծիք է, որ Նանայի «Մեկնութեան» մէջ արտայայտում տառածարտնական տեսութիւնը համընկնում է Եիրոկւանի եկեղեցական ժողովի կանոնների հետ:

Յօդուածի վերջում նո անդրտոդարձել է Ք. Չրաքեանի հրատարակութեան: Այս քննական չէ և չի կարող բաւարարել գիտական բանասիրութեան պահանջները: Զեռագրերը նկարագրուած չեն, ձեռագրական այլընթերցուածները բացակայում են, արուտծ չեն աստուածարտնական և պատմական մեկնաբանութիւններ, նշաւոծ չեն Նանայի յայտնի աղքիւնները: Այս բոլորն անհրաժեշտ է, եթէ նկատի առնենք նանայի «Մեկնութեան» կարեւորութիւնը տառածարտնութեան պատմութեան համար: Հրատարակիչը շատ համառօտ է խօսել «Մեկնութեան» մէջ ընդմիջարկուած հասերի կամ «յորդորների» մասին: բոլորն էլ արգեօք եկամուտ են. նրանց մէջ հաւանաբար թաքնուած են հայ թարգմանչի որոշ տեղեկութիւններ ժամանակի հայոց եկեղեցու մասին: Թերեւս կան նաև ուրիշ օտարամուտ հատուածներ, որ հրատարակիչը մանրամասն չի քննարկել: Այս բոլորը կարեւոր է հայ մատանագրութեան և հայոց եկեղեցու պատմութեան համար:

Ն. Ակինեանն իր «Թէոդորոս Ապիկուռա» և Նանա Ասորի Հայատանի մէջ և Նանայի Յօդհաննու մեկնութեան հայերէն թարգմանութիւնը» յօդուածում¹¹ անդրտոդանալով Մարիէսին՝ գրել է, «Հ. Ք. Չրաքեան՝ Նանայի մեկնութեան հրատարակութեան ներածութեան մէջ և լ. Մարիէս այս հրատարակութեան քննուադաւութեան առթիւ մանրամասն ծանրացած են այս կրկին խնդիրներու (Նանայի՝ Միջագիտքից Հայաստան գալու և թէոդորոս Ապիկուռայի հետ բանավիճելու. Մ. Մ.) շաւրջը ջանալով լուսաբանել ընդարձակ գծերով: Անոնք չեն անդրտոդամած մեկնութեան յառաջարտնին մէջ տեղի ունեցած խմբագրման մը և չեն օգտուած այս նիւթի վերտոքերեալ մատչելի աղքիւններէն, որոնք կը լուսաւորեն կորդ մը մթառութիւնները»¹²:

5. Epikourā = Aboukara (Տ. EA, տ. I, 1921, 439-441).

Եպիկուռա = Աբուկար

Այս գիտակութեան մէջ, որ նախորդ յօդուածի լրացումը կորիլի է համարել, Մարիէսը իրաւունք է տալիս Ք. Չրաքեանին և Մատին, որոնք Նանայի հակառակորդ եպիկուռա եպիսկոպոսը նոյնագրել են կարայի եպիսկոպոս թէոդորոս Արա կարայի հետ: Նրա սխալը արտքիրէն չիմանալու հետեանք է: Նո օրինակներով ցոյց է տուել, որ միջնորդարում արտքիրէնի զնչիւնը հայերէն տառադարձուել է կ տու-

¹⁰ Տե՛ս ստորե թիւ 5:

¹¹ Հանդէս Ամսօրեալ, 1922, թ. 4-5, էջ 194-205, թ. 6-7, էջ 357, թ. 8-9, էջ 418:

¹² Նոյն տեղում, էջ 194:

ոով, իսկ ով գիրն այն ժամանակ ձայնեղ էր արտասանւում արևմտեան բարբառներում:

6. Le meilleur exemplaire de la version arménienne des Évangiles (RSR, t. 12, 1922, 69-72).

Աւետարանների հայերեկն բարզմանութեան լաւագոյն օրինակը

1920 թուականի աշնանը հայոգէտ Ֆրեցերիք Մաքլէրը մեծահարուսաւ Լեռն Մանթաշեանի առատաձեռնութեան չնորդիւ լոյս է ընծայել այն ժամանակ իջմիածնի մատենագարանի թ. 229, այժմ Երևանի Մատենագարանի թ. 2374 քառաւետարուն հայերէն ձեռագրի անթերի լուսապատճենումը¹³, որ ձեռագրի կէս չափերն ունի, սակայն լրիւ ընթեռնելի է և հասրաւորութիւն է ընձեռում ուսումնասիրելու բնագիրը: Զնագիրն ընդօրինակուած է 989 ին: Այս հոյակապ հրատարակութիւնը գնահատելիս Մաքիէսը վեր է հանել հին հայերէնի ուսումնասիրութեան, հայեական մանրանկարչութեան և գրչագրութեան արաւեսաի տեսակէտից այս ձեռագրի ունեցած բացոտիկ նշանակութիւնը:

Մաքլէրը ձեռագիրը լուսանկարել է իջմիածնում 1909 ին: Տպագրութիւնը սկսուելու էր 1914 ի յաւլիսի վերջերին, և հրատարակութիւնը ձօնուելու էր այրութենի գիւտի և հայերէն առաջին գրքի տպագրութեան դարաշրջաններին, սակայն պատերազմը խանգարել է տպագրութեան գործը:

Իջմիածնի մատենագարանում 1903 ին աշխատելիս, հայոգէտ Անթուսան Մեյէն նկատն էր գրաբարի ուսումնասիրութեան և հայկական բանասիրութեան համար այս ձեռագրի ունեցած կարեսրութիւնը և իր մի յօդուածում¹⁴ ցանկութիւն էր յայտնել, որ այն հրատարակուեր լուսատիպ պատճենաւմուի:

Գր. Խալաթեանցը 1899 ին Մոսկուայում հրատարակել էր Լոգարեան ձեռաբանի յայտնի քառաւետարանը: Թէև այն ընդօրինակուել է 887 ին, սակայն ըստ բանասիրների կարծիքի նրա բնագիրը խիստ ազատուած է, ինչպէս Մաքլէրը հայերէն Աւետարանին նուիրուած աշխատութեան մէջ տուել է մի քանի փաստեր (տե՛ս վերեում թիւ 1):

Իջմիածնի ձեռագիրը գրչագրուած է բոլորդիր երկաթագրով և անշուշտ կը հատաքրքրի հնագրագէտին:

Հայոց լեզուի պատմութեան համար շատ կարեսր են ձեռագրի ուղղագրական յատկանիշները, որոնցից մի քանիսը նշել է Մաքլէրը հրատարակութեան ներածութեան մէջ: Դրանք տարբերում են մի չարք ձեռագրերի, մանաւոնդ տպագիրների ուղղագրութիւնից: օրինակ՝ անցեալ անկատարի յագնակի առաջին դէմքի վերջաւորութիւնը գրուած է Եամ (փոխանակ՝ Եամ), յոգնակի երրորդինը՝ Եիմ (փոխանակ՝ Եիմ) և այլն: Զեռագրի գրչութիւնը մինչեւ օրս ուսումնասիրուած չէ:

Ուսումնասիրութեան արժանի են նաև ձեռագրում գործածուած շնչարգրական նշանները, որոնց մասամբ անդրագարձել է Մեյէն իր “De quelques évangéliaires arméniens accentués” («Եհշագրուած հայերէն մի քանի աւետարանագրքերի մասին») յօդուածում: Մաքիէսը համազ-

¹³ L'Évangile arménien. Édition phototypique du manuscrit No. 229 de la Bibliothèque d'Echmiadzin publiée sous les auspices de M. Léon Mantachéff, par Frédéric Macler. Paris, P. Geuthner, 1920.

¹⁴ Observations sur la graphie de quelques anciens manuscrits de l'Évangile arménien (Journal Asiatique, 1903, II, 487-507).

ուած է, որ մանրողնին ուսումնասիրութիւնը կորող է նոր և արժեքավոր մանրումանութիւններ աւելացնել Մայէի ձեռք բերած արգիւնքներին:

Աւետարանների մի շարք հայերէն ձեռագրերի և հրատարակութիւնների հետ համեմատած՝ այս ձեռագրում կան բնագրացին հիմնական տարրերակներ, որոնցով պէտք է համարքաբուի բանսոսիրութիւնը: Ըստ Մայէի և Մարիէսի կարծիքի, հանց դրանց չնորդիւ այս քառաւետարանը հայերէն Աւետարանի լուսագոյն ձեռագիրն է:

Մեր ներկայացրածներից բացի, Մարիէսն Աւետարանների հայերէն թարգմանութեան մասին ուրիշ յօդուած չի գրել: Այս անցնենք հայ հին մատհագրութեան ընդհանուր ակնարկին:

Բ. ՀԱՅ ՀԻՒՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱԿՆԱՐԿԻ

L'arménien classique pour lui-même (ROC, t. 25, fasc. 3-4, 378-399).
Գասական հայերէնի իբրև այդպիսին

Սա առաջին բաց դաստիսութիւնն է, որով Մարիէսը «ինօթիւթիւ կոթուիիք» համալսարանում 1926ի սայեմբերի 8ից սկսել է գրարար դասաւանդել:

Նույն ընդհանուրագէս նկարագրել է, հնդերուպական լիզունների համեմատութեամբ, հին հայերէնի հնչիւնական համակարգը և նախապատմութեան զիճակը, մեր թաւուկանութիւնից առաջ Հայոստանում հայերէն խօսուելու պատմական հանգամանքները: Հինդերորդ գարբ ներկայացրել է որպէս հայ թարգմանուկան և ինքնաւրոյն գրականութեան ծաղկման շրջան: Որոշ ֆրանսիացի հայագէտների, այդ թւում և իր առարկութիւնների դէմ բանագիճնելով՝ փաստերով պաշտպանել է հայերէն գրերի գիտարի հինդերորդ գարում կատարուած լինելու պատմական տեսակէտը: Երբ փաստերից մէկն այն է, որ Էզզիկ Կոզբացին իր երկր դրել է 430ական թուականներին, քանի որ չի ակնարկում Քազիկանի ժողովը:

Մարիէսը ժխտել է մեր թուականութիւնից առաջ հայատառ հայ գրականութեան գոյութիւնը: Խնչպէս գիտնաք, այս տեսակէտը երեանում զիւնես ունի պաշտպաններ, ինչպէս պատմարան և բանուտէր Աշոտ Արքահամեանը:

Մեր առաջին թարգմանիչների մատին Մարիէսը գրել է, «Առաջին թարգմանիչները հրաշալիօրէն օժանաւ են եղել լիզութով», ճկունութեամբ և իրականութեան յարմարուելու ձիբառվոց:

Նու աշխատել է ընութեագրել հին հայերէնը, սակայն ընդունելով, որ հնարաւոր չէ այն լրիւ բնարաշել լոկ լիզուական համեմատութեամբ, քանի որ այն իր տեսակի մէջ եղակի է, չունի հնդերուպական քոյր լիզու: Աւելի լու կարելի է այն բնարաշել բանսոսիրական տեսակէտից՝ կազմելով այն կարեսը երկերի մատենագիտական ցանկը, որպէս Մարգմանուած կամ գրաւած են գասական հայերէնով: Եւ ըստ այսի մատենագիտական տեղեկութիւններով ներկայացրել է հայ հին մատհագրութեան գլխաւոր երկերը:

Մարիէսն ընդունել է գասական հայերէնի գիտար, որ կատարել են գիտնայի Մխիթարեան գիտականներ, իր չարս գասիրով: Բնդգծել է հայերէնի երկու առանձնայտակութիւն: նախ՝ գրի է տանուել սիփո-

կան այրուրինով, երկրորդ՝ գոնէ գրեթի գիւտի առաջին շրջանում եղել է թարգմանական լեզու:

Իրեւ եկեղեցու լեզու, չին հայերէնը արևելեան ույն լեզունիբից է, որոնցով խօսող ժողովուրդները սանդեկ են իրենց այրուրինը և գրանով իսկ ասրբերուել եւրոպական ժողովուրդներից, որոնք լատիներէնն են գարձրել իրենց եկեղեցու լեզուն:

Դաստիօսաւթեան չարունակութեան մէջ Մարիէնն ուրուգծել է հայերէնի անցած ուղին և - ժմ գարերում, կանգ առնելով յաւնաբան հայերէնի, բարբառների, միջնադարեան հայերէնի և հայոց լեզուի կրած օտար ազգեցութիւնների վրայ:

Դաստիօն հայերէնի և նրա չարունակութիւնը հանդիսացող աշաւչսորհաբար գրական լեզուի պատմոկան համառօտ ակնարկից յետոյ, Մարիէնը նշել է իր գասաւանդման նպաստկը, ուշադրութիւն է հրաւիրել հայ ժամանակաբաժեան բերած և բերելիք նպաստին եկեղեցական բանասիրաւթեանը՝ Աստուածաշնչի ուսումնասիրութեանը, հայրաբանութեանը և սրբերի վարքագրութեանը: Մանաւանդ վերջիններից համար հայ գրականութիւնը նոյն քառական կարեսը է, որքան ասսրտկանը: Յատկապէս հայրաբանական և փիլիսոփայական մի քանի գրուածքներ, օրինակ՝ Փիլոնի, Եփրեմի, Եւսիրեսոսի, Եւսպրոս Պոնտացու և ուրիշների սրոշ երկեր պահպանուել են միայն չին հայերէն թարգմանութեամբ: Աւստի գրանցից օգտուելու համար, բացի փիլիսոփայական և աստուածաբանական պատրատութիւնից, անհրաժեշտ են նաև հայերէնի լուրջ գիտելիքներ (ինչպէս, աւելացնենք, ունէր ինքը՝ Մարիէնը): Մի քիչ գրաբար իմանալով՝ չի կորելի ճիշտ մեկնաբաննել գրաբար բնագիրը, ճիշտ սրոշնել գրուածքի կամ հայերէն թարգմանութեան թուականը, ինչպէս այդ սիսալը գործել է, գրում է Մարիէնը, կոնիրիրը:

«Ենօթիթիւ կոթոլիք» համալսարանում գրաբարի գասաւանդումը լսկ հայագիտական նպատակներ չի հետապնդել և չի հետապնդում, հիմնականում այնտեղ հայագէտներ չեն պատրաստաւում: Նոյնը պէտք է իմանալ, ի միջի ացլց, նաև այնազ ուսուցաւող արևելեան միւս լեզունքրի մասին: «Եյդ լեզուներից իւրաքանչիւրը կորեար է կամ յաւնական արշաւանքներին նախորդող ժամանակաշրջանի Արևելքի պատմութեանն իրազեկ դասնուու, կամ սուրբգրական բանասիրութեան և բնագրագիտութեան, կամ հին եկեղեցու, արևելեան եկեղեցիների և նրանց հաստատութիւնների պատմութեան համար»¹⁵: Ներածական գաստիօսութեան վերջում Մարիէնը ուսանողներին կոչ է արել գրաբար սովորել հիմնովին: «Հայերէն բնագրերը ոչ հայոց իտակոն նպատակներով օգտագործելուց տառաջ պէտք է համբերութեամբ հայերէն սովորել սրպէս առանձին լեզու և նախ սովորել ամբողջ գրական լեզուի հիմք գրասկան հայերէնը ... գասական հայերէնն իրեւ այդպիսին»:

Երևաղեմ (Եարաւնակելի)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

¹⁵ E. Tisserant. Mémorial du Cinquantenaire, Préface (1914-1964), Paris, 1964, p. 9.